ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ԼԻԼԻԹ ԳՈՒՐԳԵՆԻ

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանում:

Գիտական ղեկավար՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Սեդրակ Աղասու Սեդրակյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	1. Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Նաիրա Ռաֆիկի Հակոբյան 2. Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հրաչյա Ռաֆայելի Հովհաննիսյան
Առաջատար կազմակերպություն՝	Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. ապրիլի 29-ին ժամը 12:00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է՝ 2022 թ. մարտի 9-ին

Հոգեբանության **064** մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Կ. Ե. Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Տեղեկատվական տեխնոլոգիաների այս դարաշրջանում լեզուն մարդկային փոխազդեցության, գիտելիքների ձեռքբերման ու տեղեկատվության փոխանակման հզորագույն գործիքն է ու դրա տիրապետման հենքը հանդիսացող մետաճանաչողությունն այսօր, կարծում ենք, բավարար չէ դրա ամբողջական ընկալման ու յուրացման համար. ուստի անհրաժեշտ է դիտարկել օտար լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական կողմը՝ շեշտադրելով բոլոր այն սոցիալ-հոգեբանական գործոնները, որոնք կարող են մեծապես փոխել լեզվի ուսումնառության ընթացքը: Մեր օրերում օրակարգային է դիտարկել լեզվի ուսումնասիրության տիրույթում միջանձնային հարաբերությունները, ուսուցիչ-ուսանող, ուսանող-ուսանող հարաբերություններով պայմանավորված սոցիալական համատեքստը, խմբային մոտիվացիան, խմբային քննադատական մտածողության հմտություններն ու ստեղծարարական ներուժը, ըստ խմբի հոգեբանական առանձնահատկությունների դասավանդման ու ուսուցման ոճերի ու եղանակների ճիշտ ընտրությունն ու կիրարկումը լսարանում: Այս առումով օտար լեզվի ուսումնառության գործընթացում սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների վերհանումն ու այդ խնդիրներին լուծումներ առաջարկելը ՝ դրանով իսկ ապահովելով արդյունավետ ուսումնառության գործընթաց, արդիական ու հրատապ խնդիր է, որի բազմաշերտ ուսումնասիրությանն էլ միտված է սույն ատենախոսությունը: Խնդիրն արդիական է նաև նրանով, որ օտար լեզվի ուսումնառության հարթությունում ժամանակակից հոգեբանական գրականության մեջ մինչև օրս չկա սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների լուծման արդյունքում առաջարկվող ուսուցման ու դասավանդման հին ու ժամանակակից մեթոդների համալիր շարք, որը կապահովի լեզվի արդյունավետ յուրացումը՝ շեշտադրելով լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական, այլ ոչ միայն մետաճանաչողական կողմը, քանի որ լեզվի յուրացման գործընթացում սոցիալ-հոգեբանական ու մշակութային նախադրյալների առկայությունն այնքան ցցուն է, որ կարող է այսօր օտար լեզվի դասավանդման մեթոդաբանության մեջ առանցքային տեղ զբաղեցնել:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ:

Ենթադրվում է, որ օտար լեզվի արդյունավետ ուսումնառության գործընթացը պայմանավորված է ոչ միայն վերջինիս հենքը հանդիսացող մետաճանաչողությամբ, այլ նաև սոցիալ-հոգեբանական գործոններով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: Ատենախոսության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է պատմական առումով երկու հոգելեզվաբանական հարթություններ: Նախ քննության ենք առել նախաչոմսկյան դարաշրջանին հատուկ որոշ տեսություններ, որոնցում արդեն հստակ տեսնում էին կապը լեզվի, մտքի ու հոգեբանության միջև: Ապա անդրադարձել ենք խոսքի ընկալման և արտաբերման, օտար լեզվի տիրապետման հարթություններում լեվելտյան ու վիգոտսկյան ժամանակների հոգելեզվաբանական ձեռքբերումներին, որից հետո համակողմանիորեն ուսումնասիրել և վերլուծել ենք վերոնշյալ ժամանակների առավելություններն ու թերություններն արդեն արդի տեսությունների համատեքստում

և, իհարկե վերջում, տեղավորել դրանք 21-րդ դարի ամբողջական հոգելեզվաբանական գործիքների ժամանակակից ներկապնակում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ օտար լեզվի արդյունավետ ուսումնառության գործընթացն է հայ-քուվեյթյան լսարաններում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ օտար լեզվի արդյունավետ ուսումնառության գործընթացի հիմքում ընկած սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրներն են:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ: Հետազոտության նպատակն է՝ ստեղծել հոգելեզվաբանական մոդել (նմուշ, օրինակ), որն օտար լեզվի ուսումնառության գործընթացը կպայմանավորի առավելապես սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների լուծմամբ, քան մետաճանաչողությամբ: Օտար լեզվի յուրացումը պետք է ընթանա լեզվաճանաչողության հոգեբանական գործունեության մեջ: Այդ նպատակով մեր առջև *խնդիր ենք դրել.*

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

- ներկայացնել հոգեբանական գրականության մեջ առկա օտար լեզվի ուսումնառության ընթացքում սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների տեսա-մեթոդաբանական ու փորձարարական հիմքերը և դրանց հիման վրա առաջարկել օտար լեզվի ուսումնառության նոր մեթոդաբանություն

  ա. հիմնավորել տարբեր պրոյեկտիվ հարցաթերթերի և փորձարարական հետազոտությունների միջոցով աֆֆեկտիվ գործոնների, այդ թվում՝ դրդապատճառի (մոտիվացիայի), դիրքորոշման (ատիտյուդի), տագնապի, սոցիալական համատեքստի, մշակութային առանձնահատկությունների ուղղակի ազդեցությունն օտար լեզվի ուսումնառության գործընթացի վրա

  բ. պատկերել ներքին խոսքի մասին առկա տեսությունների հիման վրա մեր տեսակետը ու առաջարկել դրա չափման այլ միավոր

  գ. ներկայացնել օտար լեզվի ուսումնառության գործընթացում ուսուցման ու դասավանդման առավել տարածված, ինտերակտիվ մեթոդների ու ոճերի թերություններն ու առավելությունները՝ ըստ ուսանողների հոգեկերտվածքի՝ նորովի սահմանելով օտար լեզվի սոցիալ-կրթական մոդելը

  դ. մշակել լեզվի ուսումնառության գործընթացում երեք կարևորագույն բաղադրիչներ համարվող լեզվական տագնապը, դիրքորոշումն ու դրդապատճառը չափող նոր՝ ամսագրային, հանդեսների ու փոքրիկ ակնարկների ոճով լրագրեր, հարցաթերթեր

  ե. ցուցադրել նոր՝ բլոգային մեթոդ ուսանողների վերլուծաքննադատական և ստեղծագործական ներուժի դիտարկման ու զարգացման համար
- մատնանշել քաղաքատնտեսական, կրոնական և մշակութային առանձնահատկություններ, որոնք փոխում են օտար լեզվի ուսումնառության ընթացքը
- ներմուծել օտար լեզվի ուսումնառության գործընթաց Քննադատական մտածողության հիմնադրամի առաջադրած հոգեբանական բնույթի ինը մեխանիզմները:

Առանձնակի ուշադրության են արժանացել Լ. Վիգոտսկու, Ա. Լեոնտևի, Ն. Ժինկինի, Ա. Սոկոլովի, Ս. Կրաշենի և այլոց առանցքային տեսությունները, որոնցում առաջ քաշված մեթոդների, հայեցակարգերի ու հարացույցերի կիրարկմամբ նոր լույսի ներքո է ներկայացվել *օտար լեզվի ուսումնառության գործընթացի հոգելեզվաբանական մոդելը*:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Հետազոտության մեթոդներն են՝ զրույցի մեթոդը, ինքնակենսագրական-ինքնագնահատման մեթոդիկան, Ռ. Գարդների՝ աֆֆեկտիվ գործոնների չափման՝ AMTB (Attitude-Motivation Test Battery) հարցարանները, կամային և պարտադրված ընթերցանության մասին գիտափորձը,, դիտումը, ուսանողների ինքնուրույն աշխատանքների վերլուծությունը, վերլուծաքննադատական ու ստեղծագործական ներուժի բացահայտման ու զարգացման համար մշակված հեղինակային բլոգային մեթոդիկան, ուսումնական դրդապատճառը, դիրքորոշումն ու տագնապը չափող մեր հեղինակային հարցաթերթը (ադապտացված քուվեթյան լսարաններին), մշակութային բաղդատման մեթոդը, դիրքորոշում չափող մեր հեղինակային ամսագրային եղանակն ու բուն ավտոմատացման եղանակով կառուցված դեմո-դաս մեթոդը, մայրենի և օտար լեզուների միջև զուգահեռներ և լեզվական փոխադրում կատարելու մեթոդները, հաղորդակցական լեզվի, դեմառդեմ, տեսողական, լսողական ու շարժողական ոճերով դասավանդման եղանակները, մուլտիմեդիոն, սպեկուլյատիվ ու ռեալիա ոճերով դասավանդման մեթոդաբանությունը, դերային փոփոխության մեթոդը, դեդուկտիվ-ինդուկտիվ, խաղահանելուկային ոճերով դասավանդումը, համաշխարհային քերականական մոդելի համաձայն ներդնում/մուտքագրում՝ input-ի ճիշտ մատուցման, լեզվական գիտելիքի ավտոմատացման եղանակների, օրվա քերականական կառույցի ներկայացման հիմնական ու լրացուցիչ մեթոդները, որոնք հաստատում են վերոնշյալ առաջադրված վարկածը, որն է՝ «Ենթադրվում է, որ օտար լեզվի արդյունավետ ուսումնառության գործընթացը պայմանավորված է ոչ միայն վերջինիս հենքը հանդիսացող մետաճանաչողությամբ, այլ նաև սոցիալ-հոգեբանական գործոններով»:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Մշակվել է օտար լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական կողմի շեշտադրմամբ նոր՝ տեսական մեթոդաբանություն, որը լեզվի մետաճանաչողական կողմին զուգընթաց առաջարկում է դիտարկել այն սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների շարքը, որոնց լուծումը կապահովի արդյունավետ ուսումնական գործընթաց:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել թե՛ ուսանողների, թե՛ օտար լեզու դասավանդող ուսուցիչների կողմից նախքան լեզվի ուսուցումը կամ դասավանդումը սկսելը՝ անհամեմատ ավելի արդյունավետ ուսումնական գործընթաց ապահովելու նպատակով, օտար լեզվի դասավանդման ավելի արդյունավետ եղանակների մշակման, լեզվի տիրապետման սոցիալ-հոգեբանական կողմի խթանման, ներքին խոսքի չափման միավորի տեսության մեջ այլ ռազմավարության մշակման և այլ ուսումնական աշխատանքների իրականացման ընթացքում, օտար լեզվի մասին ուսուցանումների (թրեյնինգների), զրույցների ու դիտարկումների ժամանակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության թեման հաստատվել է **Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանի հոգեբանության** ֆակուլտետի խորհրդում: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել **Ուրարտու համալսարանի հոգեբանության** ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են հեղինակի թվով տասը գիտական հոդվածներում: Ուսումնասիրության արդյունքներն առանձին զեկուցման ձևով ներկայացվել են 2015թ. ԵՊՀ-ում կազմակերպված միջազգային գիտաժողովում, ինչպես նաև Ուրարտու համալսարանի ամենամյա տեսական սեմինարներում (2016, 2017, 2018թթ.), իսկ վերջերս նաև Միջին Արևելքի ամերիկյան համալսարանի «Բիզնես ադմինիստրացիա» ֆակուլտետի ամենամյա մասնագիտական զարգացման նիստին (PPP+ կարճ տեսաերիզներ) (Քուվեյթ 2019թ. նոյ. 28), որին հաջորդել է սույն թեզում ներկայացված հարցաթերթերից ու մեթոդներից մի քանիսի փորձնական կիրարկումը քուվեյթական լսարաններում (piloting) (Քուվեյթ 2020-2021-ներդրման ակտն առկա է):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ: Ատենախոսությունը գրված է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով հրապարակված տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական հետազոտությունների հիման վրա: Սույն ատենախոսության համար առանցքային **սկզբնաղբյուրներ** են ծառայել Վ. Լեվելտի՝ խոսքի ակտում ճանաչողական գործընթացների ներգրավվածության մասին համապարփակ տեսությունը և «Հոգելեզվաբանության պատմություն. նախաչոմսկյան դարաշրջան» աշխատությունը, Լ. Վիգոտսկու՝ «Ներքին խոսք և ընթերցման գործընթաց», «Միտք և Լեզու» աշխատությունները, երեխաների մոտ գիտական հայեցակարգերի զարգացման տեսությունները, մանկական մտածողության զարգացման մասին տեսությունները, խոսքի և մտածողության խնդիրների, բարձրագույն մտավոր գործառույթների ծագման, ներքին խոսքի յուրահակտությունների ու գործառույթների մասին այլ տեսություններ: Սույն ատենախոսության համար իբրև սկզբնաղբյուր առանձնակի արժեք ունի նաև Ա. Ա. Լեոնտևի՝ ներքին խոսքի մասին տեսությունը, որտեղ նա այն պիտակում է որպես ճանաչողական գործընթաց, որն ունի կոնկրետ հիշողության գործառույթ և խոսքը պլանավորելու և կարճատև հիշողության մեջ այդ պարունակությունը պահպանելու և խնդիրներ լուծելու ծածկագիր, ինչպես նաև «Լեզու, խոսք, խոսքային գործունեություն» աշխատությունը, որը ևս բավականին մեծ ներդրում ունի այս հարթությունում, ինչպես նաև Ա. Սոկոլովի՝ ընթերցանության ժամանակ ներքին խոսքի նվազեցման կամ կրճատման տեսությունը: Օգտագործված սկզբնաղբյուրների հաջորդ արժեքավոր խումբն են կազմում Ջ. Միլլերի՝ խոսքի ծագման հոգելեզվաբանական տրանսֆորմացիոն մոդելը, Ն. Ժինկինի՝ «Խոսքի մեխանիզմները» աշխատությունը, և Ն. Չոմսկու՝ կարտեզյան լեզվաբանության մեջ քերականության վերաբերյալ առաջադրած վարկածը: Օտար լեզվի ուսումնառության գործընթացում սոցիալ-հոգեբանական գործոնների դիտարկման գործում կարևոր սկզբնաղբյուրներ են նաև Վ. Հումբոլդտի՝ լեզվի յուրացման մասին «պլատոնական» տեսությունը, Ս. Կրաշենի՝ օտար լեզվի ուսումնառության, լեզվական ներդնման կամ մուտքագրման ու արտադրման (in-

put & output) և կամային ընթերացնության վերաբերյալ տեսությունները, ինչպես նաև Ռ. Գարդների՝ օտար լեզվի ուսումնասիրության գործընթացում դրդապատճառի, դիրքորոշման և տագնապի չափման մասին տեսությունները: Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ օգտագործված նյութերի մյուս մասը **գիտական հետազոտություններն** են, որոնք առնչվում են ինչպես գիտախնդրի հիմնական, այնպես էլ նրա առանձին կողմերին: Օտար լեզվի տիրապետման տիրույթում սոցիալ-հոգեբանական կողմի ուսումնասիրության համար առանձնակի կարևորություն ունեն Ա. Դ. Բեդելիի և Բ. Հոֆմանի՝ մարդու հիշողության մասին արժեքավոր տեսությունները, ինչպես նաև լեզվի տիրապետման տիրույթում ինֆորմացիայի գիտակցական ու անգիտակցական/ենթագիտակցական ճանաչման ու ձեռքբերման մասին ոչ պակաս արժեքավոր տեսությունները: Սույն թեմային առնչվող փորձարարական մեթոդների ուսումնասիրության առումով, բացի Ռ. Գարդների և Ա. Մասգորեթի AMTB (Attitude-Motivation Test Battery) մոդելային հարցաթերթից, հարկ է առանձնացնել նաև ներքին և արտաքին դրդապատճառ չափող տարբեր հարցաթերթերը, ինչպես նաև ուսումնական տագնապ չափող հարցաթերթային մեթոդները: Սույն աշխատանքի հետազոտական ամբողջականությունը լրացրել են օտար լեզվի ուսումնառության գործընթացում ստեղծագործական ներուժն ու քննադատական հմտությունները դիտարկող ու զարգացնող մեթոդները՝ ինքնահաշվետվության, հարցազրույցային, օրագրային և բլոգային ոճով, մշակույթների բաղդատման մի շարք մեթոդներ, քննադատական մտածողություն խթանող հայտնի ինը հոգեռազմավարական գործիքների տեսությունը, ստեղծագործական միտքը խթանող տեսություններ, ուսումնական կրեատիվությանն ուղղված այլ մեթոդներ, ուսումնական ինքնուրույնությունը չափող այլ տեսություններ, որոնք առանցքային ուսումնասիրության են ենթարկվել: Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ համակողմանի աշխարհայացքի ձևավորման տեսանկյունից կարևորում ենք օտար լեզվի արդյունավետ ուսումնառության տիրույթում ուսուցման տարբեր ոճերի բազմազանությունը, ինչպես նաև դասավանդման ոճերի բազմակարծության շուրջ պտտվող առանցքային տեսությունները: Անմասն չեն մնացել այս հարցերից մի քանիսի շուրջ հայ հեղինակներ Կառլեն Ոսկանյանի, Հովսեփ Թութունջյանի ու Դորա Հովհաննիսյանի, Սեդրակ Սեդրակյանի որոշ աշխատություններ: Սույն թեզի դրույթների շուրջ քննադատական տարրեր պարունակող ուսումնասիրություններից հատկապես առանձնացրել ենք Ն. Չոմսկու համաշխարհային քերականական մոդելի, լեզվական փոխադրման, ներքին խոսքի և ընթերցանական կողմի փոխկապակցվածության, ներդնման կարևորության և այլնի մասին տեսությունները: Հատուկ քննության են առնվել օտար լեզվի տիրապետման ոլորտում լեզուն ուսումնասիրողի հոգեկերտվածքային տարբերություններն ու այլ մտահոգեբանական առանձնահատկություններին առնչվող տեսությունները: Հուտ լեզվի հոգեբանական կողմի շեշտադրումներն ընդգծելու նպատակով՝ հիմնավոր ուշադրություն ենք հրավիրել ընդհանուր լեզվամշակման, խոսքի մշակման ճանաչողական մոդելների ներկապնակի, ինչպես նաև նույն լեզվական տիրույթում լուռ ընթերցանության տիրույթում ներքին խոսքի դերի ու առանձնահատկությունների վերաբերյալ

տեսությունների վրա: Օտար լեզվի ուսումնառության գործընթացի վրա սոցիալ-հոգեբանական կողմի ազդեցությունն էլ ավելի ցցուն ներկայացնելու նպատակով քննության են առնվել սոցիալ-մշակութային, սոցիալ-կրթական մի շարք գործընթացներ ու իրողություններ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:

Կարելի է ասել, որ սույն թեզն օտար լեզվի ուսումնառության տիրույթում լեզվի սոցիալ-հոգեբանական կողմին առնչվող համալիր և ամբողջական ընկալման մոտեցման առաջին փորձն է հայերեն լեզվով, որով որոշակիացվում ու ընդլայնվում են օտար լեզվի ուսումնառության գործընթացի սոցիալ-հոգեբանական կողմի սահմանները, մասնավորապես՝

- լուսաբանվում են օտար լեզվի արդյունավետ ուսումնառության հիմքում ընկած սոցիալ-հոգեբանական կարևորագույն հիմնախնդիրները ու դրանց տրվում լուծումներ
- առաջարկվում է լեզվի ուսուցման գործընթաց ներմուծել մտածող տեսակ կերտող Քննադատական մտածողության հիմնադրամի առաջադրած ինը մեխանիզմները
- մշակվում է ուսումնական դրդապատճառը, դիրքորոշումն ու տագնապը չափող հարցաթերթային ու ամսագրային մեթոդաբանություն քուվեյթյան լսարանների համար՝ հաշվի առնելով նրանց մշակութային, կենցաղային որոշ առանձնահատկություններ
- ներկայացվում է նաև բուն ավտոմատացման եղանակով կառուցված դեմո-դաս մեթոդը, որը, ազդելով կարճաժամկետ հիշողության վրա, ապահովում է մեծաքանակ բառերի հոսքը գիտակցություն և դրանց արագ յուրացումը
- առաջարկվում է ներքին խոսքի չափման միավոր՝ աչքերի շարժը
- ներմուծվում է վերլուծաքննադատական հմտություններն ու ստեղծագործական ներուժը բացահայտելու բլոգային մեթոդը
- բացահայտվում են մշակութային, սոցիալ-տնտեսական առանձնահատկություններ, որոնք մեծապես որոշում են լեզվի ուսումնառության ընթացքը
- վերհանվում են օտար լեզվի ուսումնառության գործընթացում ուսուցման ու դասավանդման առավել հայտնի, ինտերակտիվ մեթոդների ու ոճերի թերություններն ու առավելությունները՝ նորովի սահմանելով օտար լեզվի սոցիալ-կրթական մոդելը ըստ ուսանողների հոգեկերտվածքի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից առաջինը բաղկացած է երեք, երկրորդը՝ երեք, երրորդը՝ չորս ենթագլուխներից), եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և հետազոտությունների ցանկից, հավելվածներից. վերջինները պարունակում են երեք աղյուսակ, երեք հիստոգրամմա և քսանչորս դիագրամմա:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ ներկայացնում ենք ատենախոսվող թեմայի արդիականությունն ու կարևորությունը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, առաջադրվող վարկածը, ինչպես նաև գիտական նորույթը, պաշտպանության ներկայացված դրույթները, հետազոտության նպատակն ու խնդիրները,

հետազոտության տեսամեթոդական հիմքերը՝ գրականության ցանկի համառոտ ներկայացմամբ:

Առաջին գլուխը՝ **«ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ»,** քննության է առնում հոգեբանության պատմության մեջ դեռ լեվելտյան ժամանակներից սկսած հիմնախնդրի արծարծման պատմությունը մինչև մեր օրերը: Չնայած նրան, որ այդ ժամանակ լեզվաարտադրման ու ընբռնման հարթությունում շարահյուսական գործընթացների վերաբերյալ որևէ լուրջ հոգեբանական շեշտադրմամբ հետազոտություն չկար, այնուամենայնիվ, ժամանակակից քերականական վերլուծության փորձերում այսօր կիրառվող տեսական և մեթոդական գործիքներից շատերը մեզ են հասել 19–րդ դարի սկզբից: Ուստի հարկ ենք համարել մանրամասն ներկայացնել հիմնախնդրի պատմական կողմը, այնուհետև վերոնշյալի համապատկերում միախառնել նոր տեսություններն ու մեթոդները:

Առաջին՝ **«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ»** ենթագլխում ներկայացված են հոգեբանության պատմության մեջ առկա առանցքային այն տեսությունները, որոնց գլխավոր նպատակն է պարզել ու երևան հանել այն բոլոր կառույցներն ու գործընթացները, որոնք ընկած են լեզուն խոսելու ու հասկանալու մարդու կարողության հիմքում: Ներկայացված հոգելեզվաբանական գրականությունը բավականին ընդգրկուն է. այն ներառում է հարցեր, որոնք առնչվում են լեզվամշակմանը, լեզվաարտադրման մեխանիզմների հոգեբանական կողմին (ընթերցանություն, գրավոր, խոսակցական ու լսողական հմտություններ և հիշողություն), բառային պահեստին, դրանց որոնմանն ու պահպանմանը (ինչպես են բառերը պահպանվում մեր մտքում և հետագայում կիրարկվում), լեզվի ձեռքբեռմանը (ինչպես է երեխան ճանաչում լեզուն), մտքի և լեզվի փոխկապակցվածությանը, ներքին խոսքի դերակատարությանը, օտար լեզվի տիրապետմանը:

Երկրորդ՝ **«ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ—ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»** ենթագլխում ներկայացվում են այն բոլոր տեսությունները, որոնք անհրաժեշտ է ուսումնասիրել օտար լեզվի հոգեբանական կողմի որոշ առանձնահատկություններ հասկանալու համար: Հոգելեզվաբանության մեջ օտար լեզվի ուսումնառության գործընթացում սոցիալ-հոգեբանական կողմին առնչվող հիմնական դերակատարային տեսության ձևավորման գործում էական նշանակություն ունի Վիգոտսկու «Միտք և բառ» աշխատությունը, ինչպես նաև մտածողության գործընթացների միջև փոխհարաբերության մասին նրա ուսումնասիրությունը, որը լույս է սփռում լեզվի ընկալման, մշակման, կազմակերպման, շրջակա միջավայրից ստացած տեղեկատվությունը պահելու ու այն ճիշտ կիրառելու և կոնկրետ գործողությանն ուղղելու մեխանիզմների վրա: Օտար լեզվի ուսումնառության ընթացքում սոցիալ-հոգեբանական կողմի դիտարկման համար պակաս կարևոր չեն նրա ներքին խոսքի մասին տեսությունները: Այս ենթագլխում խոսում ենք նաև Ա. Ա. Լեոնտևի «Լեզու, խոսք, խոսքային գործունեություն» աշխատության մասին, որը հետաքրքիր մեկնաբանում է տալիս խոսքային գործունեություն տարրին: Այս ենթագլխում

առանձնացնում ենք նաև նույն հարցերի շուրջ այլոց տեսությունները, որոնք, կարելի է ասել, լրացնում են վերոնշյալ առանցքային տեսությունները:

Երրորդ՝ **«ԽՈՍՔԻ ԾԱԳՄԱՆ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»** ենթագլխում դիտարկում ենք օտար լեզվի տեսության հիմնահարցերից մեկը՝ խոսքային մոդելների բնույթի ու մատուցման միջոցների խնդիրը, ինչը մեծ մասամբ կախված է խոսքի ծագման հոգելեզվաբանական մոդելից: Այդ մոդելներից մեկը Չոմսկու և Միլլերի փոխակերպման (տրանսֆորմացիոն) մոդելն է՝ իր բոլոր թերություններով հանդերձ: Այստեղ անմասն չէ Ա. Ա. Լեոնտևի՝ լեզվի հնչունաբանական կողմի յուրացման խնդրի մասին տեսությունը, ինչպես նաև Ն. Ի. Ժինկինի «Խոսքի մեխանիզմները» աշխատությունը: Ենթագլուխը հագեցած է այս հարցի շուրջ այլ հոգեբանների ու լեզվաբանների քննադատական տեսություններով ու լրացումներով:

Երկրորդ գլխում՝ **«ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ»,** քննության է առնվում օտար լեզվի ուսումնառության ընթացքում ժամանակակից փորձարարական մեթոդների, դրանց առավելությունների ու թերությունների ամբողջական համալիրը, փորձ ենք կատարում հիմնավորել, թե որքանով են դրանք արդյունավետ կամ թերի առաջին գլխում նշված տեսական մեթոդների հետ համեմատ, կամ ինչպես կարելի է արդյունավետ կիրառել հին ու ժամանակակից մեթոդների համակցությունն օտար լեզվի ուսումնասիրության մեջ:

Առաջին՝ **«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ»** ենթագլխում, առաջնորդվելով սույն հիմնախնդրի հետազոտական մասով, համեմատականորեն վերլուծում ենք օտար լեզվի ուսումնասիրության ժամանակակից մեթոդների բազմաժանր շարքը՝ շեշտադրելով, իհարկե, խնդրի հոգեբանական կողմը: Եվ քանի որ լեզվի յուրացման գործընթացը մեծապես պայմանավորված է լեզուն սովորողի անհատականությամբ, նրա ցուցաբերած դիրքորոշմամբ, սոցիալական խավի ու էթնոմշակութային պատկանելությամբ, մայրենի և ուսումնասիրվող լեզվի միջև առկա նմանություններով ու տարբերություններով, առանձնացրել ենք ժամանակակից մեթոդներից լեզվական առումով գերակշռող մայրենի և ուսումնասիրվող լեզվի միջև զուգահեռներ անցկացնելու մեթոդը, կամային ընթերցանության, լեզվամշակման, լեզվական փոխակերպման, ներդնման մասին տարբեր տեսություններ ու մեթոդներ, որոնց ճիշտ կիրարկմամբ ավելի է զարգանում օտար լեզու ուսումնասիրողի բառապաշարը, քերականական գիտելիքներն ու գրավոր հմտությունները: Առանձնակի ուշադրություն ենք հրավիրել Ս. Կրաշենի՝ ներդնման մասին տեսությանը: Ներկայացվում են Կ. ֆ. Շլեգելի և Վ. Հումբոլդտի մարդու մտքի մասին «պլատոնական» տեսությունները, Չոմսկու համընդհանուր քերականական մոդելը, ուսումնառության գործընթացի՝ գիտակցական կամ հակառակը՝ ենթագիտակցական երևույթ լինելու մասին տեսություններ և այլն:

Երկրորդ՝ **«ՆԵՐՔԻՆ ԽՈՍՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ»** ենթագլխում ներկայացվում են ներքին խոսքի մասին հիմնարար այն տեսությունները, ըստ որոնց՝

Վիգոտսկին, օրինակ, ներքին խոսքը համարում է խնդիր լուծելու եղանակ, իսկ ահա Ա.Ա. Լեոնտևը ներքին խոսքին վերագրում է երկու ծածկագիր՝ խոսքը պլանավորելու և կարճաժամկետ հիշողության (STM) մեջ այդ պարունակությունը պահպանելու ծածկագիր, և այլն: Վերջինս այն համարում է ճանաչողական գործընթաց, որն ունի կոնկրետ հիշողության գործառույթ: Հիմնվելով Վիգոտսկու՝ «Ներքին խոսքը բարձրագույն մտքի արդյունք է» թեզի վրա և կատարելով որոշ փորձեր, ներկայացնում ենք սեփական տեսակետը ներքին խոսքի մասին և որպես ներքին խոսքի չափման միավոր՝ առաջարկում ոչ թե բերանի շարժման մկանային համակարգը, այլ աչքերի շարժն ընթերցանության ժամանակ:

Երրորդ՝ «**ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՃԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**» ենթագլխում, դիտարկում ենք օտար լեզվի առավել տարածված դասավանդման և ուսուցման ոճերը, կատարում դրանց վերաբերյալ տարբեր փորձեր և ուսումնասիրություններ՝ պարզելու համար, թե դրանցից որն է լավագույնս «աշխատում» արաբական լսարաններում՝ պայմանավորված ուսանողների հոգեկերտվածքային առանձնահատկություններով: Օտար լեզվի ուսուցման և դասավանդման ամբողջընկալական մոտեցումների շրջանակում քննության ենք ենթարկում ուսուցչակենտրոն և ուսանողակենտրոն (teacher-centred vs student-centred), հաղորդակցական (CLT-Communicative learning/teaching), «ջերմացնող/փոթորկող» (warming up/brainstorming) առաջադրանքները, որոնց հիմքում ընկած է վիճահարույց խնդիր լուծելու գործառույթը, և դրանք այնպես են կառուցված, որ առաջադրանքը կատարելիս ապահովվում է լեզվի յուրացում+խնդրի լուծում+մտքի զարգացում բանաձևը: Հատուկ քննության են առնված լսողական ուսուցման ոճը (auditory learning style), որը կենտրոնանում է մեծ մասամբ լսողական խթանների վրա՝ ինչպես խոսակցական լեզուն է, երաժշտությունը, ձայները, տեսողական ուսուցման ոճը (visual learning style), երբ կիրառվում են տեսողական նյութեր՝ նկարներ, դիագրամմաներ կամ սխեմաներ, և շարժողական ուսուցման ոճը (kinaesthetic learning style), երբ, որպես ուսուցման ոճ, կիրառվում է շարժումը: Ներկայացվում են նաև դեդուկտիվ-ինդուկտիվ մեթոդով դասավանդման ոճը, ինչպես նաև այլ մեթոդներ, որոնց արդյունքները ևս մեկ անգամ փաստում են, որ դրանցից յուրաքանչյուրի ընտրությունը կախված է տվյալ լսարանից, քանզի ընտրված դասաոճն անհրաժեշտ է համապատասխանեցնել լսարանի ընդհանուր պահանջներին ու նպատակներին, ուսանողների հոգեկերտվածքին:

Աղյուսակներ քուվեյթյան լսարաններում նախընտրելի դասավանդման ոճերից

ԹԵՄԱ. Կրավորական սեռը անգլերենում

Աղյուսակ 1. Բիզնես ադմինիստրացիա ֆակուլտետ, խումբ MBC/23

Հոգեբ. փոփոխականներ	Թիվ	Դասավանդման մեթոդ
Լեզվական ունակություններ	4	Դեմառդեմ
Անհատականություն	16	Տեսողական
Հուզական բնութագիր	3	լսողական, կինեստետիկ

Աղյուսակ 2. Բիզնես ադմինիստրացիա ֆակուլտետ, խումբ MBD/28

ԹԵՄԱ. Ուղղակի-անուղղակի խոսքը անգլերենում

Լեզվական ունակություններ	4	Դեմառդեմ
Անհատականություն	22	Տեսողական
Հուզական բնութագիր	2	լսողական, կինեստետիկ

Երրորդ գլխում՝ **«ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»,** կատարում ենք մի շարք ուսումնասիրություններ՝ հիմնվելով նախկին գլուխներում հոգեբանական գրականության մեջ օտար լեզվի ուսումնասիրման հիմնախնդրի պատմության, օտար լեզվի ուսումնառության ժամանակակից փորձարարական մեթոդների, դրանց առավելությունների ու թերությունների մասին մինչև օրս առաջ քաշված տեսությունների վրա: Սույն թեզում մեր նպատակն է մատնանշել սոցիալ-հոգեբանական ու մշակութային այն խնդիրները, որոնք ընկած են մասնավորապես հայ

ու արաբ ուսանողի՝ օտար լեզուն դյուրին ու արդյունավետ տիրապետելու կարողության հիմքում:

Առաջին՝ **«ԱՖՖԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՏԱՐԱԾՎԱԾ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱԶՄԸ»** ենթագլուխը ներկայացնում է շարքը այն սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների, որոնք կտրուկ փոխում են օտար լեզվի յուրացման ընթացքը՝ զուգահեռներ անցկացնելով հայ և քուվեյթցի արաբ ուսանողների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների միջև՝ ավելի լավ պատկերացնելու համար, թե սոցիալ-մշակութային և հոգեբանական գործոնների ազդեցության ներքո ինչպիսի ընթացք կարող է ստանալ օտար լեզվի ուսումնառության գործընթացը: Բացի դրդապատճառի բաղադրիչից շեշտվում են նաև երկու այլ՝ ոչ պակաս կարևոր բաղադրիչներ՝ օտար լեզվի հանդեպ դիրքորոշումն ու լեզվական տագնապը: Այս աֆֆեկտիվ գործոնները չափելու թերևս ամենատարածվածը AMTB (Attitude/Motivation Test Battery) հայտնի հարցաթերթն է, որի միջոցով ստուգվում են հինգ դրդապատճառային-դիրքորոշումային փոփոխականներ և դրանց հարաբերությունը օտար լեզվի յուրացման հետ: Վերոնշյալ երեք բաղադրիչները չափելու նպատակով մշակվել են այլ հարցաթերթեր՝ նույն AMTB-ի համառոտ տարբերակը՝ նախատեսված հայկական և քուվեյթական լասարանների համար, մեր կողմից մշակված **AIEMT (Academic Intrinsic/Extrinsic Motivation Test-Ուսումնական ներքին-արտաքին դրդապատճառի հարցաթերթ)** և **AAMT (Anxiety Measurement Test-լեզվական տագնապը չափելու)** հարցաթերթերը, որոնք անց են կացվել քուվեյթական և հայկական լսարաններում: Այս հարցաթերթերին զուգահեռ առաջարկվում են նաև դրդապատճառ և դրական վերաբերմունք խթանող, լեզվական տագնապ նվազեցնող ուսումնական առաջադրանքների համալիր-շարք: Հետազոտությանն ընդհանուր առմամբ մասնակցել է մոտ 250 հայ և քուվեյթցի ուսանող:

***Պատկեր 1-** հատված Ռ. Գարդների AMTB հարցաթերթից*



Պատկեր 2- *հատված մեր հեղինակած AMT (Anxiety Measurement Test- լեզվական տագնապը չափող թեստ) հարցաթերթից (հայկական լսարաններ)*



Երկրորդ՝ **«ԱՖՖԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»** ենթագլխում համակարգում և ձևակերպում ենք դիրքորոշման չափման յուրօրինակ մեթոդներ, որոնց շարքում է ինքնահաշվետվությունը, որն իրականացնում ենք բանավոր հարցազրույցների, հարցաշարերի, օրագրերի, հանդեսների, լրագրերի միջոցով: Ծանոթ լինելով դիրքորոշման չափման այլ եղանակներին, այն է՝ անուղղակի-միջնորդավորված հաշվետվություն, սոցիոմետրիկ հաշվետվություն, բացառեցինք դրանց կիրառումը՝ քաջ ծանոթ լինելով արաբական մշակույթին: Ուստի, տարբերվելով դրդապատճառի գնահատման հարցաթերթային ոճից, ընտրվել է լրագրերի կամ ամսագրերի, հանդեսների ու փոքրիկ ակնարկների (essay) տարբերակը: Քննադատական մտածողության ու ստեղծագործական մտքի հմտություններին ուղղված բլոգային ուսումնասիրությունները ևս հստակ արդյունքներ են տվել:

Երրորդ՝ **«ՍՈՑԻԱԼ—ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱԶՄԱՊԻՍՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ**

ԽՈՐՔԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ» թերևս ամենաընդարձակ ենթագլխում քննության ենք ենթարկում օտար լեզվի ուսումնասիրության տեսության մեջ գրեթե անտեսված խնդիրներ, որոնցից մի քանիսն ընկերաբանական-կենցաղային բնույթ ունեն: Կարևոր է հաշվի առնել ուսանողի սոցիալ-մշակութային միջավայրը, որտեղ ուսանողն ապրում և ուսումնասիրում է լեզուն՝ չանտեսելով նախ և առաջ մայրենի լեզվի սոցիալ-մշակութային կաղապարները և դրանց առանձնահատկությունները, որպեսզի համեմատական անցկացվի մայրենի և օտար լեզվում առկա սոցիալ-մշակութային առանձնահատկությունների միջև և հետևաբար հստակեցվի, թե որքանով է ուսանողը պատրաստ որդեգրել օտար լեզվի սոցիալ-մշակութային նմուշները: Լեզվի արդյունավետ ուսումնառության գործընթացում անմասն չեն ուսումնասիրվող լեզուն խոսող երկրի հետ ունեցած տնտեսական, քաղաքական, ռազմավարական հարաբերությունների կարգավիճակը, որոշ սոցիալ-կենցաղային նմանություններ կամ տարբերություններ, ուսումնասիրվող լեզվի ազդեցիկությունը միջազգային ասպարեզում: Թեզի սույն գլխում կարևորվում են օտար լեզվի ուսումնառության գործընթացում մշակույթների բաղդատման մեթոդը, ուսումնական անկախությունը (autonomy), սոցիալական այն միջավայրը, որում ուսանողը ապրում է, սովորում, ձևավորում իր հարաբերությունները, այսինքն՝ ուսանող-ծնող, ուսանող-ուսուցիչ, ուսանող-ուսանող հարաբերությունները:

Չորրորդ՝ **«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԻՆԸ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ (ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) ԿԻՐԱՌՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»** ենթագլխում ձևակերպվում են լեզվի ուսումնառության գործընթացում «եզրափակիչ» և անփոխարինելի գործոններ համարվող քննադատական մտածողության ու ստեղծագործական ներուժի մասին տեսություններն ու դրանց շուրջ կառուցարկվում վերջիններիս դիտարկման ու զարգացման նոր եղանակներ: Առաջարկվում է ուսումնական պրակտիկայում կիրառել Քննադատական մտածողության հիմանդրամի առաջադրած հոգեբանական ինը մեխանիզմներ, որոնց ճիշտ կիրարկումն ապահովում է ոչ միայն արդյունավետ ուսուցման գործընթաց, այլ նաև կերտում «մտածող» տեսակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ բաժնում, հանրագումարի բերելով ատենախոսության հիմնական արդյունքները՝ ցանկանում ենք հատկանշել հետևյալ եզրահանգումները, որոնք, մեր կարծիքով, առավել կարևոր են.

1.Օտար լեզվի արդյունավետ ուսումնառության գործընթացը պայմանավորված է ոչ միայն մետաճանաչողությամբ, այլ նաև սոցիալ-հոգեբանական գործոններով:

Օտար լեզվի արդյունավետ յուրացումը կախված է նրանից, թե որքանով է ուսանողը պատրաստակամ ընդունել ուսումնասիրվող լեզվի ու այն կրող մշակույթի վարքագծային մոդելներն ու նմուշները, նրանից, թե ինչպիսին է տվյալ ուսանողի դրդապատճառը, դիրքորոշումը, լեզվական տագնապը, ուսումնական ինքնուրույնությունը, ստեղծարարական ներուժը, վերաբերմունքը, քննադատական մտածողության հմտությունները՝ վերոնշյալները, թերևս, լինելով առավել կարևոր, քան մետաճանաչողությունը:

2. Ներքին խոսքի զարգացմանն ուղղված առաջադրանքները շոշափելիորեն խթանում են օտար լեզվի ուսումնառության գործընթացը:

Օտար լեզվի ուսումնառության խորքային տիրույթում ներքին խոսքի վերաբերյալ մինչև օրս կատարված ուսումնասիրությունները՝ խոսքի ակտում ճանաչողական գործընթացների ներգրավվածության մասին համապարփակ տեսությունները, ներքին խոսքի և ուսուցման գործընթացի միջև անմիջական կապի, դրա՝ ճանաչողական, կարճաժամկետ հիշողության մեջ տեղեկատվություն պահպանելու, խոսքի ծրագրման, խնդիրներ լուծելու գործառույթների, ինչպես նաև ներքին խոսքի չափման մասին տեսությունները չափազանց մեծ ներդրում ունեն օտար լեզվի ուսումնառության գործընթացում և տրամադրում են հիմնարար գիտելիքներ օտար լեզվի արդյունավետ ուսումնառությանն ուղղված հնարավոր եղանակների հայտնաբերման, մշակման ու ընդլայնման համար: Հիմնվելով այս տեսությունների պնդումների վրա՝ ներկայացնում ենք ներքին խոսքի և դրա չափման միավորի մասին մեր մոտեցումը, ինչպես նաև ներքին խոսքի զարգացմանն ուղղված առաջադրանքների շարք:

3. Մշակութային, կրոնական, տնտեսաքաղաքական որոշ առանձնահատկություններ ևս պայմանավորում են օտար լեզվի արդյունավետ ուսումնառության գործընթացը:

Օտար լեզվի ուսումնառության ընթացքում սոցիալ-մշակութային, կրոնական, տնտեսական և այլ առանձնահատկություններ պակաս կարևոր չեն դրա արդյունավետությունն ապահովելու գործում: Լեզվի յուրացման գործընթացը տեղի է ունենում սոցիալական համատեքստում, և այդ գործընթացի արդյունավետությունն անկասկած կախված է նրանից, թե ինչ սոցիալ-մշակութային միջավայրում է ապրում ու զարգանում տվյալ անձը, ինչ մարդկանցով է շրջապատված, արդյոք շրջապատող մարդիկ կիսում են նրա նախապատվությունները կամ ընտրությունը, արդյոք ուսանողի մայրենի ու օտար լեզուն կիսում են նույն կամ գոնե նման սոցիալ-մշակութային կաղապարային առանձնահատկություններ, ինչպիսին է ուսումնասիրվող լեզուն կրող երկրի միջազգային իմիջը, ինչպիսին է այն երկրի մշակույթը և այլն:

4. Օտար լեզվի դասավանդման կամ ուսուցման ոճերի ընտրությունը պետք է կատարել՝ ելնելով բացառապես ուսանողների սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններից:

Ըստ ուսանողների անհատական առանձնահատկությունների՝ ուսուցման և դասավանդման այս կամ այն ոճին տրվել է համապատասխան առաջնահերթություն՝ համեմելով դրանք նոր նյութերով: Առաջարկվել են ուսանողակենտրոն (student-centred), լսողական, խոսակցական, տեսողական, երաժշտական-ձայնային, թիմային, դերային փոփոխման, սպեկուլյատիվ, ռեալիա, դեդուկտիվ-ինդուկտիվ ուսուցման և դասավանդման ոճերով հարուստ նոր մեթոդաբանական շարք, խաղ-հանելուկների շարան:

5. Ուսումնական ինքնուրույնությունը կարևորագույն պայմաններից է օտար լեզվի ուսումնառության գործընթացում:

Օտար լեզվի ուսումնառության ընթացքում ուսումնական ինքնուրույնությունը բնորոշում ենք որպես բացառապես հոգեբանական երևույթ՝ ուսման հանդեպ

պատրաստակամություն, ուսումնասիրման գործընթացի և ուսումնասիրվող նյութի պարունակության միջև հոգեբանական կապ, ուսման գործընթացը վերահսկելու կարողություն, նպատակներ ընտրելու ու դրանք իրագործելու, սեփական ընտրության մեջ առանց մեկի միջամտության կողմնորոշվելու ունակություն: Սույն թեզը փորձ է կատարում ցույց տալ ուսումնական ինքնուրույնության բացակայության հիմնական պատճառները և դրա առաջացման ու խթանման համար եղանակներ առաջարկում:

6. Օտար լեզվի արդյունավետ ուսումնառության գործընթացը պայմանավորված է սոցիալական համատեքստով և կարևորվում է ուսուցիչ-ուսանող, ուսանող-ծնող և ուսանող-ուսանող հարաբերություններով:

Ուսումնական գործընթացը չի կարող ծառայել իր հիմնական նպատակին, եթե վերոնշյալ հարաբերությունները չարժևորվեն: Կարևորվում են ուսումնասիրվող լեզվի վրա դասախոսի թողած մանկավարժական ազդեցությունը, այն սոցիալական համատեքստը, որն իրականանում է ուսանող-ծնող, ուսանող-ուսանող կապով: Այս ամենը պայմանավորում է ուսանողի՝ օտար լեզվի հանդեպ համակրանքի կամ հակակրանքի, դրական կամ բացասական վերաբերմունքի, դրդապատճառի կամ վերջինիս իսպառ բացակայության (ամոտիվացիայի) ձևավորման հանգամանքը:

7. Օտար լեզվի ուսումնառության գործընթաց Քննադատական մտածողության հիմնադրամի առաջադրած ինը հոգեբանական մեխանիզմների ներմուծումն ապահովում է ուսումնակատարողական բարձր ցուցանիշներ:

Վերոնշյալ հոգեբանական մեխանիզմների կիրարկումը միտված է գնահատելու օրվա ուսումնական ձեռքբերումներն ու ձախողումները, փոխել մտածողական-վարքագծային որոշ նմուշներ, զարգացնել ինտելեկտուալ չափանիշներ ուսումնական շրջանակում, ազատել ուսումնական էգոյից, հնարավորություն տալ ուսանողին վերասահմանելու աշխարհընկալումն ու տրամադրել սեփական հույզերի հետ կապ հաստատելու միջոցներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. **Մելիքյան L.,** Երկրորդ (օտար) լեզվի ուսումնասիրման սոցիալ-հոգեբանական գործոնները արաբական լսարաններում (քուվեյթական օրինակով): Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան 2015, էջ 200-203:
2. **Մելիքյան L.,** Օտար լեզվի ուսուցման ձևերի ընտրությունը՝ ըստ արաբ (քուվեյթցի) ուսանողների հոգեբանական առանձնահատկությունների: «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» պաշտոնական գիտական հանդես, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 3(21) էջ 135-141:
3. **Մելիքյան L.,** Ներքին և արտաքին մոտիվացիայի դերն օտար լեզվի ուսումնառության գործընթացում (հայ-քուվեյթական) օրինակով: «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» պաշտոնական գիտական հանդես, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 3(21) էջ 142-148:
4. **Մելիքյան L.,** Philosophical foundation of second language acquisition. Wisdom N 1. Armenian State Pedagogical University, Yerevan 2016, էջ 125-130:
5. **Մելիքյան L.,** Երկրորդ լեզվի ուսումնասիրության գործընթացում վերլուծաքննադատական հմտությունների զարգացման և կիրարկման եղանակները. Կաճառ գիտական տարեգիրք. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն., 2017, էջ 453-458:
6. **Մելիքյան L.,** Psychological support in overcoming problems underlying personal growth. Անձի զարգացման խնդիրները գլոբալիզացիայի պայմաններում. հոգեբանա-մանկավարժական ասպեկտներ միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու. Ռուս-հայկական սլավոնական համալսարան, Երևան., 2018, էջ 234-238:
7. **Մելիքյան L.,** Մշակույթը՝ որպես կրթության ոլորտում հոգեբանական խնդիրների առաջացման հնարավոր պատճառ (քուվեյթական լսարանների օրինակով. Անձի զարգացման խնդիրները գլոբալիզացիայի պայմաններում. հոգեբանա-մանկավարժական ասպեկտներ միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու. Ռուս-հայկական սլավոնական համալսարան, Երևան., 2018, էջ 238-244:
8. **Melikyan L. G.,** Impact of Anxiety On Academic Performance in Foreign Language Acquisition. German International Journal of Modern Science., N: 12, 2021, էջ 66-69:
9. **Меликян Л. Г; Акопян Н. Р;** Роль внутренней речи в процессе изучения иностранного языка. International Independent Scientific Journal N: 31, 2021, էջ 53-55:
10. **Melikyan L. G.,** Academic Dependency in Foreign Language Acquisition (on the Example of Kuwaiti-Armenian Class Observations). International Independent Scientific Journal N: 30, 2021, էջ 58-59:

ЛИЛИТ Г. МЕЛИКЯН

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ ПРОБЛЕМАТИКА ОВЛАДЕНИЯ ИНОСТРАННЫМ ЯЗЫКОМ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 "Социальная психология"

Защита состоится 29 апреля 2022 года в 12:00 ч. на заседании специализированного совета по психологии 064 ВАК по присуждению ученых степеней при АГПУ имени Хачатура Абовяна, по адресу: 0010, г. Ереван, Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

АКТУАЛЬНОСТЬ ТЕМЫ: В наш век информационных технологий язык является самым мощным инструментом человеческого взаимодействия, приобретения знаний и обмена информацией, а метапознание (метакогнитивизм), которое является основой его владения, сегодня, как мы думаем, недостаточно для его полного восприятия и овладения, поэтому необходимо учитывать социально-психологический аспект изучения иностранного языка, делая упор на те социально-психологические факторы, которые могут сильно изменить курс изучения языка. В настоящее время на повестке дня стоит рассмотрение межличностных отношений в области изучения языка, социального контекста, обусловленного отношений «учитель-ученик», «ученик-ученик», групповой мотивации, навыков группового критического мышления и творческого потенциала, правильного выбора стилей и методов обучения в соответствии с психологическими характеристиками групп, и т.д.. В связи с этим выявление социально-психологических проблем в процессе изучения иностранного языка и предложение решений этих проблем, а значит, и процесс эффективного обучения, является актуальной и срочной задачей, на решение которой и направлена данная диссертация. Проблема актуальна в связи с тем, что в области изучения иностранного языка в современной психологической литературе до сих пор отсутствует исчерпывающий набор старых и современных методик обучения, предлагаемых в результате решения социально-психологических проблем, которые обеспечили бы эффективное овладение языком, подчеркивая социально-психологическое, а не метакогнитивное изучение языка, поскольку наличие социально-психологических и культурных предпосылок в процессе овладения языком настолько очевидно, что сегодня может занять ключевое место в методологии обучения иностранному языку.

ГИПОТЕЗА ИССЛЕДОВАНИЯ: «Процесс эффективного изучения иностранного языка обусловлен не только метакогнитивизмом, лежащим в основе последнего, но и социально-психологическими факторами».

Цель исследования - создать психолингвистическую модель, которая будет обусловливать процесс изучения иностранного языка с социально-психологической проблематикой, а не с метапознанием только. Для этой конкретной цели мы, как указывает ***академическая новизна диссертации*** ниже, поставили перед собой **задачу:**

• Представить теоретические и методологические основы социально-психологических факторов в процессе изучения иностранного языка и на их основе предложить новую методологию изучения иностранного языка.

а. Обосновать прямое влияние некоторых социально-психологических факторов (мотивция, аттитюд, тревога, социальный контекст, культурные особенности, и.т.д.) на процесс изучения языка с помощью тестов и экспериментальных исследований.

б. Изобразить наш взгляд на основе существующий теорий внутренней речи и предложить другую единицу измерения.

в. Определить недостатки и преимущества наиболее распространенных интерактивных методов и стилей обучения и преподавания в процессе изучения языка в соответствии с психологическими характеристиками студентов путем переосмысления социально-образовательной модели иностранного языка.

г. Разработка новых журнальных и пробных тестов для измерения языковой тревоги, отношения и мотивации в процессе изучения иностранного языка.

д. Внедрить новый блоговый метод выявления и развития у студентов навыков критического мышления и творческого потенциала.

• Параллельно с чисто психологическими факторами, определить некоторые политические, религиозные, культурные компоненты, которые оказывают значительное влияние на процесс изучения иностранного языка.

• Подчеркнуть необходимость введения 9 психологических механизмов Фонда критического мышления в процессе изучения языка.

Теоретическая и практическая значимость исследования.

Разработана новая теоретическая методика с акцентом на социально-психологическую сторону изучения иностранного языка, которая, наряду с метакогнитивным аспектом языка, предлагает рассмотреть ряд основных социально-психологических проблем, решение которых обеспечит эффективный учебный процесс. Результаты исследования могут быть использованы как студентами, так и преподавателями иностранных языков перед преподаванием и изучением языка, чтобы обеспечить гораздо более эффективную среду обучения; разработать более эффективные модели обучения иностранному языку и его овладению, разработать другую стратегию в теории единицы измерения внутренней речи. Результаты исследования могут быть использованы при выполнении других образовательных мероприятий, во время тренингов и дискуссий.

Апробация и внедрение результатов исследования.

Результаты исследования обсуждались на различных международных научных конференциях, часть исследований была апробирована в отдельных кувейтских классах в 2020 году.

Структура диссертации.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений: последнее содержит 3 таблицы, 3 гистограммы и 24 диаграммы. Объем статьи составляет 184 страниц (без приложений).

По теме диссертации опубликовано 10 статей.

LILIT G. MELIKYAN

SOCIO-PSYCHOLOGICAL PROBLEMATICS IN FLA

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in speciality 19.00.03. "Social Psychology".

The Defense of this thesis will take place at 12:00 on April 29th, 2022 at the session of Degree Awarding Commission 064 specializing in Psychology of the Higher Attestation Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

Address: 0010, Yerevan, Tigran Mets st. 17

SUMMARY

THE RESEARCH ACTUALITY: In our age of information technology, language is the most powerful tool of human interaction, the acquisition of knowledge and the exchange of information, and metacognition, which lies in the basis of its possession, today, as we state, is not enough for its full perception and mastery, therefore it is necessary to take into account the socio-psychological aspect of foreign language acquisition, focusing on those socio-psychological factors that can greatly change the course of language learning. Currently on the agenda we have to consider interpersonal relationships in the field of language learning, social context, conditioned by the relationship of "teacher-student", "student-student", group motivation, group critical thinking skills and creativity potential, the right choice of styles and methods of teaching and learning in accordance with the psychological characteristics of the group, etc.

In this regard, the identification of socio-psychological problems in the process of learning a foreign language and the proposal of solutions to these very problems, and therefore provision of effective learning environment is an urgent task, which this dissertation is aimed at solving. In the field of a foreign language study in modern psychological literature there is still no exhaustive set of old and modern teaching methods proposed as a result of solving socio-psychological problems that would ensure effective language acquisition, emphasizing the socio-psychological, and not only metacognitive side of the language learning process, since the presence of socio-psychological and cultural prerequisites in language acquisition is so obvious that today it can play a pivotal role in the methodology of teaching and learning a foreign language..

THE RESEARCH HYPOTHESIS: "The foreign language acquisition process is conditioned not only by metacognition underlying the latter, but also by socio-psychological factors.".

The goal of the research is to create a comprehensive psycholinguistic model alleging that FLA process is more conditioned by socio-psychological factors, than metacognition. For this specific purpose, we, **as the academic novelty of the dissertation states below**, have set ourselves a task to:

• Introduce the theoretical and methodological foundations of socio-psychological factors in FLA process throughout language history on the basis of which a new methodology on language learning has been suggested .

a. Ground the direct impact of socio-psychological factors (including affective factors-attitude, motivation, anxiety, social context, cultural characteristics) on language learning process through various projective tests and experimental research.

b. Interpret in its full depth various theories on inner speech and come up with a new viewpoint on inner speech and its measurement unit.

c. Identify the shortcomings and advantages of the most widespread interactive methods and learning/teaching styles in the language learning process, by defining a new socio- educational model of the foreign language learning process.

d. Develop new journalistic, magazine-style tests for measuring linguistic anxiety, attitude, and motivation in FLA process.

e. Introduce a new blog-based method for detecting and developing students' critical thinking skills and creative potential.

• In parallel with purely psychological factors, introduce some political, religious, cultural components that have proved to considerably impact the language learning process.

• Highlight the necessity of inserting 9 psychological mechanisms (offered by the Foundation for Critical Thinking) into language learning process.

Theoretical and practical significance of the research.

A new theoretical methodology has been developed with emphasis on the social-psychological side of foreign language learning, which, along with the metacognitive aspect of the language, offers to consider the series of major socio-psychological problems, the solution of which will ensure an effective educational process. The results of the research can be used by both students and foreign language teachers before teaching and learning the language in order to ensure a much more effective learning environment; to develop more effective models of foreign language teaching and its mastery, to develop another strategy in the theory of inner speech measurement unit. The research results can be applied in implementation of other educational activities, during trainings and debates.

Approbation and adoption of the research results.

The research results were discussed during various international scientific conferences, some part of the research was piloted in segregated Kuwaiti classrooms in 2020.

Structure of the thesis.

The thesis consists of introduction, three chapters, conclusion, list of used literature and appendices: the latter contains three tables, three histograms and twenty-four diagrams. The volume of the paper is 184 pages (excluding appendices).

Ten articles have been published on the subject of the thesis.